

Եվրամիության «Աջակցություն Հայաստանում Թվինինգ և Թայքս ծրագրերի կառավարման գործակալությանը» ծրագիր

ԹԱՅԵՔՍԸ Հայաստանում

Թայքս ծրագրի կանոնների ու ընթացակարգերի ՁԵՌՆԱՐԿ



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրամիության կողմից



Իրականացվում է ECO կազմակերպության կողմից՝
ADETEF և RaL ընկերությունների հետ համատեղ

Սույն հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական Միության աջակցությամբ:
Հրատարակության բովանդակության համար պատասխանատու է ECO-ի գլխավորած կոնսորցիումը
և այն որևէ կերպ չպետք է ընկալվի որպես Եվրոպական Միության տեսակետների արտացոլում:

**Այս գրքույկը մշակվել է Հայկական ծրագրերի կառավարման գործակալության կողմից՝
ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Աջակցություն Հայաստանում Թվինինգ և Թայեքս
ծրագրերի կառավարման գործակալությանը» ծրագրի աջակցությամբ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի
նախարարության Ծրագրերի կառավարման
գործակալություն**

Հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Մ. Մկրտչյան 5
Էկոնոմիկայի նախարարություն, 7-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 54 39 81
Ֆաքս՝ +374 10 54 39 83
Էլ. փոստ՝ info@pao-armenia.am
Վեբ կայք՝ www.pao-armenia.am

**«Աջակցություն Հայաստանում Թվինինգ և
Թայեքս ծրագրերի կառավարման
գործակալությանը» ծրագիր**

Հասցե՝ ՀՀ, Երևան 0010, Մ. Մկրտչյան 5
Էկոնոմիկայի նախարարություն, 8-րդ հարկ
Հեռ.՝ +374 10 582 955
Էլ. փոստ՝ twinning@cornet.am

ՎՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՅՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՅՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՅՈՒՄՆԵՐԻ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1. ԹԱՅԵՔՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	5
2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹԱՅԵՔՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ.....	6
3. ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ	8
4. ԹԱՅԵՔՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	9
4.1. Փորձագիտական առաքելություն	9
4.2. Սեմինար-աշխատաժողով.....	10
4.3. Ծանաչողական այց.....	11
4.4. Գնահատման առաքելություն.....	12
5. ԹԱՅԵՔՍ ՀԱՅՏԻ ԸՆԹԱՑՔԸ	13
6. ԹԱՅԵՔՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	17
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԹԱՅԵՔՍ ՀԱՅՏԱԶԵՎԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ	18
ՀԱՎԵԼՎԱԾ 2 . ԹԱՅԵՔՍ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹԻԿՆԵՐ	27
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	42

Թ՞ ä ՞ ì àôØÛ°ծ

- ԳՀՀ - Գործընկերության և համագործակցության համաձայնագիր
- ԳԾ - ԵՄ-Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագիր
- ՇՄ - Շահառու մարմին
- ՇԵ - Շահառու երկիր
- ԵՀ - Եվրոպական հանձնաժողով
- ԵՀՔ - Եվրոպական հարևանության քաղաքականություն
- ԵՀԳԳ - Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք
- ԵՄ - Եվրոպական միություն
- ԱԵ - ԵՄ անդամ երկիր
- ԾԿԳ - ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի կառավարման գործակալություն
- ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
- ԿԶՄ - Կառույցների զարգացման ստորաբաժանում
- ՏԱ - Տեխնիկական աջակցություն
- Թայեքս - Տեխնիկական աջակցություն և տեղեկատվության փոխանակում
- ՏԱՍԻՍ - Տեխնիկական աջակցություն ԱՊՀ երկրներին
- ԳԶԳ - Գերմանական զարգացման գործակալություն (GTZ)

ՄՕԾՁ Ի àôÂÚàôÛ

Ձեռնարկի նպատակն է տրամադրել տեղեկատվություն Թայեքս գործիքի նպատակների, գործառնական շրջանակների, ինչպես նաև դրա կիրառման և իրականացման մեխանիզմների ու ընթացակարգերի վերաբերյալ: Ձեռնարկը նախատեսված է ԾԿԳ աշխատակազմի, ՀՀ պետական մարմիններում նշանակված համակարգող (պատասխանատու) անձանց և Թայեքս ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի համար:

Սույն Ձեռնարկը, հիմնված լինելով ԵՀ Թայեքս պաշտոնական ուղեցույցի վրա, համապատասխանեցված է Հայաստանի փորձին ու իրականությանը:

1. **ԱՅՍՕՅԵՔԻ ՕԾՅ՝ ՕԾՄՅ ԵՒ ԱՍ, ԹՅ ՍՈՑԻԱԿԱՆ ԻՕՒՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՉԵՌՆԱՐԿ**

ԱՅ ՍՈՑԻԱԿԱՆ Եվրոպական հանձնաժողովի Տեխնիկական աջակցության և տեղեկատվության փոխանակման գործիք (ծրագիր) է և ղեկավարվում է ԵՅ Ընդլայնման գլխավոր տնօրինության Կառույցների զարգացման ստորաբաժանման կողմից: Սկզբնապես, Թայեքսի նպատակն էր ԵՄ նոր անդամ պետություններին, ԵՄ անդամակցության թեկնածու և պոտենցիալ թեկնածու երկրներին տրամադրել կարճաժամկետ տեխնիկական աջակցություն՝ համաձայնեցված առաջնություններին համահունչ և ուղղված ԵՄ օրենսդրության մոտարկմանը, ներդրմանը և կիրարկմանը: 2006 թվականից, Թայեքսը կիրառելի դարձավ Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակում ընդգրկված երկրներում և Ռուսաստանում՝ ԳՀՀ-ում, ԵՀԲ Գործողությունների ծրագրերում, Համագործակցության պայմանագրերում սահմանված առաջնային զարգացման ծրագրերի և ընթացիկ կառուցվածքային երկխոսության արդյունքում հատկանշված նպատակների իրականացմանն աջակցելու նպատակով:

Թայեքսի հիմնական խնդիրներն են.

- Շահառու երկրի ազգային օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը համապատասխան բարեփոխման, ինչպես նաև օրենսդրության հետագա ներդրման և կիրարկման ուղղությամբ կարճաժամկետ տեխնիկական աջակցության և խորհրդատվության տրամադրում;
- Շահառու երկրների գործընկերներին ու շահագրգիռ կողմերին տեխնիկական ուսուցում և «գործընկերը գործընկերոջը» աջակցության տրամադրում;
- Տեղեկատվական միջնորդի դերի ստանձնում՝ տեղեկատվություն հավաքագրելու և տրամադրելու միջոցով;
- Մոտարկման գործընթացը պարզեցնելու և դիտանցելու, ինչպես նաև հետագա տեխնիկական աջակցության կարիքները որոշակիացնելու նպատակով տվյալների և տեղեկատվական միջոցների տրամադրում:

Թայեքս աջակցության շահառու են համարվում այն կառույցները/մարմինները, որոնք որոշակի դերակատարում ունեն համապատասխան ոլորտներում Շահառու երկրների օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը համապատասխանեցնելու և ապա այն կիրարկելու գործում: Թայեքսի հիմնական թիրախային խմբերն են.

- Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող քաղաքացիական ծառայողները.
- Դատաիրավական համակարգի պատասխանատուները.
- Պատգամավորները, խորհրդարանի աշխատակազմի և օրենսդրության բարեփոխմամբ զբաղված հանձնաժողովների աշխատակիցները.
- Սոցիալական գործընկեր հանդիսացող մասնագիտական և առևտրային միավորումները, ինչպես նաև արհմիությունների և գործատուների միությունների ներկայացուցիչները.
- Օրենսդրական տեքստերի թարգմանիչները, խմբագիրները:

2. ԹՅՄՔԻՆ ԵՍՏՄԱՆ ԿՈՆՏՐԱԿՏԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՉԵՌՆԱՐԿ

Թայեքսի ծառայությունները հիմնականում կենտրոնացված են ԵՄ-Հայաստան ԳՀՀ-ում և ԵՀՔ գործողությունների ծրագրում նշված առաջնային ոլորտներում: Թայեքսի շրջանակում իրականացվող գործողությունները ֆինանսավորվում են Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո:

Հայաստանում Թայեքսի շահագրգիռ կողմերին կարելի է բաժանել երկու խմբի.

- ՀՀ պետական մարմիններն ու հաստատությունները՝ Թայեքս ծրագրի Շահառուները և
- ԵՄ հաստատությունները, ԵՄ կողմից ֆինանսավորվող կապալառու կազմակերպությունները՝ տեխնիկական աջակցություն տրամադրողները:

Թայեքս ծրագրի շրջափուլում ՀՀ շահառուների շրջանում գլխավոր շահագրգիռ կողմերն են.

- ՀՀ Շահառու հաստատությունները (նախարարություններ, գերատեսչություններ և այլ պետական մարմիններ), որտեղ գլխավոր դերը պատկանում է ՇՆ-երի կողմից նշանակված համակարգող անձինք;
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ծրագրերի կառավարման գործակալությունը:

ԵՄ-ի կողմից Թայեքսի շահագրգիռ կողմերն են.

- Եվրոպական հանձնաժողովի ԿԶՍ-ն,
- Հայաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը,
- Կազմակերպչական ծառայություններ մատուցող արտաքին կազմակերպությունը (ներկայումս ԳԶԳ),
- Թայեքսի փորձագետները ԵՄ անդամ պետություններից:

ԵՂ ԿԶՍ-նպատասխանատու է Թայեքսի ընդհանուր գաղափարախոսության համար և սահմանում է Թայեքսի ներքո իրականացվող միջոցառումների իրավական, ֆինանսական և ընթացակարգային շրջանակները: Ստորաբաժանումը գնահատում է աջակցություն ստանալու հայտերը և ընթացք է տալիս դրանց: Այն նաև ԵՄ հանդիսանում է կապող օղակ ՀՀ շահառուների և համապատասխան փորձագիտություն տրամադրող ԵՄ անդամ պետությունների միջև:

Թայեքսի դիմումները գնահատում և ԵՀՔ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, Թայեքսի ներքո իրականացվող միջոցառումները կազմակերպում են ԿԶՍ-ի հետևյալ կառույցները՝

- Ներքին շուկայի հարցերով,
- Գյուղատնտեսության հարցերով),
- Ազատության, անվտանգության և արդարադատության հարցերով,
- Շրջակա միջավայրի, էներգետիկայի և տրանսպորտի հարցերով:

Կազմակերպչական ծառայություններ մատուցող արտաքին կազմակերպությունն ԿԶՍ-ի կողմից շնորհված մադատի հիման վրա ապահովում է ստացված հրահանգներին համապատասխան Թայեքս միջոցառման իրագործումը: Ծառայություններ մատուցողը պատասխանատու է կազմակերպչական բոլոր հարցերի (պատվիրելուց մինչև վճարելը) համար (համաժողովի դահլիճ, հյուրանոց, թռիչքներ, սնունդ, թարգմանություն, տեխնիկա): Կապալառուն ուղղակիորեն դիմում է Շահառու կառույցին (կամ որոշ դեպքերում համակարգող անձին)՝ համատեղ աշխատանքի միջոցով Թայեքս միջոցառման կազմակերպման լավագույն լուծումները գտնելու նպատակով:


ԾԿԳ-ն, որը ՀՀ-ում Թայեքսի համակարգող մարմինն է, ապահովում է ԿԶՍ և Շահառու կառույցի միջև կապը: ԾԿԳ-ն նաև ապահովում է Թայեքսի ներքո իրականացվող միջոցառումների համապատասխանությունը ԵՄ-Հայաստան գործողությունների ծրագրի, ինչպես նաև ՀՀ քաղաքականության նպատակներին:

ԾԿԳ-ն ներգրավված է Թայեքսի շրջափուլի բոլոր բաղադրիչներում, որոնք են՝

- Իրազեկում և ուսուցումը,
- Հայտերի ընթացքի տրամադրումը
- Թայեքսի ներքո միջոցառումների իրականացումը,
- Թայեքսի ներքո իրականացված միջոցառումների գնահատումը և հաշվետվությունը:

Շահառու մարմնի ղեկավարի կողմից նշանակված համակարգող անձը պատասխանատու է ներկայացված Թայեքս հայտերի նախնական գնահատման, ինչպես նաև ԾԿԳ-ի կամ ԿԶՍ-ի և համապատասխան Շահառու մարմնի միջև համագործակցության համակարգման համար:

Հայաստանում Թայեքսի իրականացման գծագիրը բերված է ստորև:



3. **ՔՅՁ ¼°İ àòÂÚ² Ü ´² ծÒծ² òàòØ °i àôêàôòàôØ**

Իրազեկման և ուսուցման նպատակն է Շահառու մարմինների ներկայացուցիչների համար ապահովել և պահպանել Թայեքս ընթացակարգերի իմացության բարձր մակարդակ, որպեսզի նրանք կարողանան արդյունավետ կերպով օգտագործել Թայեքսը: ԾԿԳ-ն պետք է ապահովի Թայեքսի և դրա ընթացակարգերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրումը Համակարգող անձանց՝ ընթացիկ աջակցության և խորհրդատվության, ինչպես նաև Համակարգող անձանց համար ուսուցման դասընթացներ կազմակերպելու միջոցով:

Առաջարկվում է նաև Թայեքսի պոտենցիալ շահառու հանդիսացող պետական մարմինների ներկայացուցիչների համար անցկացնել իրազեկության բարձրացման սեմինարներ: ՇՄ անձնակազմի Թայեքսին դիմելու գործնական կարողությունները բարձրացնելու նպատակով, ԾԿԳ-ն Շահառուներին տրամադրում է մասնագիտական աջակցություն (օրինակ՝ տեղեկատվական սեմինարներ, հանդիպումներ, ԾԿԳ լրագրի տարածում, միջոցառումներ ըստ անհրաժեշտության, ինտերնետային կայքի նյութերի օգտագործում)՝ առնվազն մեկ Թայեքսի հայտ պատրաստելու գործում:

Քանի որ Թայեքսն իրենից ներկայացնում է պահանջարկով ուղղորդվող ծրագիր, այս մեկնարկային գործողությունները չեն կարող կրել մշտական բնույթ: Հետևաբար, ենթադրվում է որ իրազեկման և ուսուցման գործառույթներն իրականացվելու են առնվազն տարին մեկ սեմինարի մակարդակով: Սեմինարը համարվելու է ԾԿԳ-ի և Թայեքսի առկա կամ պոտենցիալ Շահառուների միջև տեղեկատվության և փորձի փոխանակման հարթակ:

4. ԴՅՄՕԹԵ ՓԷՁՈՅ ԵՁՈՍՍՕԾՔ Ի ՕԷՅԻ ՍՕԾԱ

Թայքքսի աջակցությունը (ծառայությունները) կարող է տրամադրվել առանձին Շահառու երկրին, կամ մի քանի Շահառու երկրներին՝ կախված վերահսկված կարիքներից: Այդ ծառայությունները կարող են լինել վերահսկված կարիքին համապատասխանող մեկանգամյա առանձին գործողություն, կամ աջակցության գործողությունների հաջորդականություն՝ այն դեպքում երբ աջակցությունն անհրաժեշտ է երկար ժամանակահատվածում և այն հնարավոր չէ ստանալ տեխնիկական աջակցության այլ մեխանիզմների միջոցով:

4.1. Փորձագիտական առաքելություն

Թայքքսի Փորձագիտական առաքելության հիմնական խնդիրներն են.

- Շահառու երկրի կողմից որոշակիացված ոլորտներում օրենսդրության և կառավարման գործընթացների գործառնության վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- Իրավական ակտերի և նրանց կիրարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,
- ԵՄ օրենսդրության պարզաբանում և դրա կիրարկման լավագույն փորձի ներկայացում:

Միջոցառման պայմաններն ու պահանջները.

Տևողություն	Առավելագույնը 5 աշխատանքային օրը
Ֆինանսավորման ծածկույթ	Ճանապարհածախս և հյուրանոց/ գիշերավարձ, օրապահիկ, փորձագետի ֆինանսական փոխհատուցում, անհրաժեշտության դեպքում թարգմանության ապահովում:

Շահառու մարմինը պատասխանատու է Փորձագիտական առաքելության մասնակիցների (շահառուների) ընտրության համար: Շահառու մարմնի կողմից փորձագետների ընտրություն չի պահանջվում: Սակայն եթե Շահառու մարմինը ճանաչում է ԵՄ անդամ պետության փորձագետին, ում փորձը գերադասելի է, կամ կա նախընտրելի անդամ պետության որևէ մարմին կամ հաստատություն, կամ ընդհանուր առմամբ որևէ անդամ պետություն, ապա այդ կետերը պետք է նշվեն հայտի մեջ: Հարկ է նշել, որ ոչ միշտ է, որ հնարավոր է երաշխավորել տվյալ փորձագետի ընտրությունը:

Փորձագիտական առաքելության օրակարգը պետք է մշակվի Շահառու մարմնի կողմից և վերջնական տարբերակն ուղարկվի ԿԶՍ առաքելությունից առնվազն մեկ ամիս առաջ:

4.2. Սեմինար-աշխատաժողով

Թայեքս սեմինարի/աշխատաժողովի նպատակն է շահառու երկրի համապատասխան լսարանին ներկայացնել և պարզաբանել ԵՄ օրենսդրությունը և դրան առնչվող հիմնահարցերը:

Հետևաբար Թայեքս սեմինարը/աշխատաժողովը կարելի է լավագույնս օգտագործել հետևյալ խնդիրների լուծման համար.

- ընտրված ընդհանուր ոլորտում ԵՄ անդամ երկրի օրենսդրական և/կամ ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ հիմնարար տեղեկատվության ստացում,
- Հայաստանի համար կիրառելի համապատասխան օրենսդրական դաշտ բացահայտելու նպատակով ավելի նեղ և հատուկ ոլորտներում ընտրված ԵՄ մի շարք անդամ երկրների օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտերի վերաբերյալ իրազեկության բարձրացում:

Միջոցառման պայմաններն ու պահանջները.

Տևողություն	Առավելագույնը 3 աշխատանքային օրը
Ֆինանսավորման ծածկույթ	<ul style="list-style-type: none"> ➤ Թայեքսը ֆինանսավորում և պատվիրում է (Ծառայություններ մատուցողի միջոցով) հետևյալ կետերը. ➤ աշխատաժողովի անցկացման դահլիճը և տեխնիկական սարքավորումները (եթե շահառուն չի կարող համապատասխան դահլիճ տրամադրել իր տարածքում), ➤ ճանապարհածախսը և հյուրանոցի ծախսերը, օրապահիկը, խոսնակների (փորձագետների) ֆինանսական փոխհատուցումը, ➤ աշխատաժողովի կայացման վայրից 100 կմ և ավելի հեռավորության վրա բնակվող մասնակիցների համար՝ բնակության ծախսեր/գշերավարձ և 400 կմ և ավելի հեռավորության վրա բնակվող մասնակիցների համար նաև ճանապարհածախս, ➤ համաժամանակյա թարգմանություն և թարգմանչական սարքավորումներ, ➤ սուրճի և ճաշի ընդմիջումներ (Թայեքսը չի ֆինանսավորում ընթրիքն ու ընդունելությունը):

Երբ աջակցության հայտն ընդունվում է ԿԶՍ-ի կողմից, Շահառու մարմինը պատասխանատու է դառնում մասնակիցների ընտրության և հրավիրելու համար: Ընտրված մասնակիցների անուններն ու պաշտոնները պետք է ուղարկվեն կԶՍ՝ այսպես կոչված «Գրանցման գործիք»¹-ի միջոցով: Շահառու մարմինը նաև պատասխանատու է միջոցառման օրակարգի և տեղական բանախոսներին հրավիրելու համար: Մասնակիցների ցուցակը և օրակարգը պետք է ԿԶՍ ուղարկվեն սեմինարի/աշխատաժողովի մեկնարկից առնվազն երեք շաբաթ առաջ:

¹ Ծրագիրը կարելի է բեռնել Թայեքսի ինտերնետային կայքից՝ <http://taiex.ec.europa.eu/registration/>

Շահառու մարմնի ներկայացուցիչը (տեղական համակարգողի) պետք է ներկա լինի սեմինարի/աշխատաժողովի ընթացքում, որպեսզի ապահովի սեմինարի/աշխատաժողովի յուրաքանչյուր օր բոլոր մասնակիցների գրանցումը և պատասխանի նրանց հնարավոր հարցերին:

Շահառու մարմնին խորհուրդ է տրվում սեմինարից/աշխատաժողովից առաջ խնդրել ԿԶՍ-ին ուղարկել ներկայացումները, դրանք մասնակիցներին բաժանելու նպատակով:

Հարկ է նշել որ ծառայություններ մատուցող արտաքին կազմակերպությունը կարող է միջոցառման վայր ուղարկել օրակարգի պատճեններ, անվանացանկեր, անվանական կրծքանշաններ, հաճախումների ցուցակներ, պաստառներ (հանդիպման սենյակում փակցնելու համար) և յուրաքանչյուր մասնակցի համար նախատեսված Թայեքսի գրիչներ պարունակող արկղը: Եթե դահլիճի հետ կապված աջակցությունը նախատեսված չէ (սովորաբար 40-ից պակաս մասնակիցներ ունեցող միջոցառումների համար), տեղական համակարգողն է պատասխանատու հաճախումների ցուցակի, վերը նշված պարագաների բաժանման և տեղեկատվության ու տեսանելիության նպատակով պաստառներ փակցնելու համար:

4.3. Ճանաչողական այց

Թայեքսի ճանաչողական այցերի ընդհանուր նպատակն է շահառու երկրների պաշտոնյաներին հաղորդել ԵՄ օրենսդրության կիրառման և/կամ գործածմանն առնչվող գործնական ունակություններն ու հմտությունները:

Հետևաբար Թայեքս ճանաչողական այցը լավագույնս կարելի է օգտագործել հետևյալ խնդիրների լուծման համար.

- ԵՄ անդամ երկրների համապատասխան մարմինների կազմակերպչական կառուցվածքի վերաբերյալ փորձի ձեռքբերում, ծանոթացում ներքին կանոններին, գործող ընթացակարգերին, վարչարարական/կառավարման համակարգին (անդամ երկրների համապատասխան մարմինների կառավարման ուղղահայաց և հորիզոնական գործընթացներ):
- օրենսդրության պահանջները իրագործելու և կիրարկելու նպատակով անդամ երկրների շահագրգիռ կազմակերպությունների և կառույցների հետ համագործակցության փորձի վերաբերյալ իրազեկության բարձրացում, ներառյալ. այլ պետական մարմինների, գործարար միավորումների, հասարակական կազմակերպությունների հետ կապ հաստատելու և արդյունավետ հաղորդակցվելու համար կիրառվող գործընթացներն ու ընթացակարգերը, անդամ երկրների պետություն-մասնավոր հատված համագործակցություն (PPP) և արտաքին հաղորդակցության/կապերի այլ տեսակներ ներդնելու կանոնակարգերը:

Միջոցառման պայմաններն ու պահանջները.

Տևողություն	Առավելագույնը 5 աշխատանքային օրը
Ճանաչողական այցի մասնակիցների թվաքանակը	Առավելագույնը 3 մասնակից
Ֆինանսավորման ծածկույթ	Թայեքսը (Ծառայություններ մատուցողի միջոցով) ֆինանսավորում և պատվիրում է հետևյալը. մասնակիցների ճանապարհածախսը և հյուրանոցը/գիշերածախս, նրանց օրապահիկը, անհրաժեշտության դեպքում թարգմանություն:

4.4. Գնահատման առաքելություն

Գնահատման առաքելության հիմնական նպատակն է հավասարը-հահամարժեքորեն գնահատել երկրի առաջխաղացումը ԵՄ ընդհանուր օրենսդրությանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում միջազգային ընդունված առաջադեմ փորձին և ստանդատներին համապատասխանելու հարցում:

Թայեքսի գնահատման առաքելությունը կատարելապես հարմար է շահառու կառույցին՝ ընտրված մասնագիտական ոլորտում անդամ երկրների փորձագետների կողմից «գործընկերը գործընկերոջը» սկզբունքին համաձայն մշակված վերլուծական հաշվետվությունների և առաջարկությունների միջոցով ԵՄ ընդհանուր օրենսդրության մոտարկման գործընթացի վերաբերյալ հետադարձ կապ ապահովելու համար: Նման առաքելությունները կարող են մեծ նպաստ բերել ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի, 2009-2011թթ. Ազգային Ինդիկատիվ ծրագրի և Համագործակցության այլ փաստաթղթերի իրականացմանն ուղղված միջոցառումների դիտանցման և գնահատման գործին:

Թայեքսի գնահատման առաքելությունը կարող է նաև հանդես գալ շահառու մարմնի կողմից հայցած «խորհրդատվական այցելությունների» տեսքով, որոնք կոչված են բացահայտել օրենսդրական, ինստիտուցիոնալ և վարչարարական բացթողումները այն ոլորտներում, որոնք սահմանվում են որպես առաջնահերթություն ԵՄ ընդհանուր օրենսդրությանը մոտարկման համար: ՀՀ օրենսդրության ԵՄ ընդհանուր օրենսդրության համադրությամբ ունեցած բացթողումների վերլուծությունը կարող է նաև հիմք հանդիսանալ ԹՎԻՆԻԳ ծրագրեր սկսելու կամ ԵՄ կողմից ֆինանսավորվող աջակցության այլ ծրագրերից օգտվելու համար:

Գնահատման առաքելության տևողությունը սովորաբար կազմում է երեքից հինգ աշխատանքային օր՝ կախված քննարկվող հարցերի առանձնահատկություններից: Հնարավորության դեպքում, անդամ պետության փորձագիտական թիմին ուղեկցում է համապատասխան ճյուղային գլխավոր տնօրինության պաշտոնյան՝ դիտորդի կարգավիճակով: Ըստ նպատակահարմարության, առաքելությանը կարող է մասնակցել նաև ՀՀ-ում ԵՀ պատվիրակության ներկայացուցիչը:

Շահառու մարմին այցելությունից երկու շաբաթ անց ԵՄ Անդամ պետության փորձագետները պատրաստում են Գնահատման առաքելության զեկույցի առաջին նախնական տարբերակը, որը, որակի ստուգման համար, ուղարկվում է ELARG D4 և ճյուղային գլխավոր տնօրինություններ: ԵՀ համապատասխան ծառայությունների ստուգումից հետո, զեկույցը ներկայացվում է Շահառու մարմին և ՀՀ-ում ԵՀ պատվիրակություն՝ Փորձագիտական առաքելության ավարտից հետո ոչ ուշ քան 4 շաբաթ անց:

5. **Â² Ú° øê Ð² Úî Æ ÀÛÂ² òøÀ**

Թայեքս աշխատաժողովի/սեմինարի, ճանաչողական այցի, կամ փորձագիտական առաքելության հայտերի պատրաստման ընթացքը կախված է նրանից թե ով է ներկայացնում հայտը: Սովորաբար կարելի է տարանջատել հայտերի երկու դեպք.

ա/ Հայտը ներկայացվում է ՀՀ-ում որևէ Շահառուի կողմից,

բ/ Թայեքսի միջոցառման կազմակերպման նախաձեռնությունը գալիս է ԵՀ-ից կամ ԵՄ անդամ որևէ պետությունից:

Առաջին դեպքում (Շահառուի կողմից ներկայացված հայտ) իրականացվում են հետևյալ քայլերը.

1. Շահառուն լրացնում է համապատասխան հայտի ձևաթերթիկը (սեմինարի, փորձագիտական առաքելության կամ ճանաչողական այցի) և ներկայացնում այն տվյալ մարմնում համապատասխան պատասխանատու անձին, ով էլ իրականացնում է հայտնի նախնական գնահատումը: Պատասխանատու անձի նախնական գնահատումից (և անհրաժեշտության դեպքում հայտատուի հետ քննարկումներից) հետո, Թայեքս միջոցառման հայտն ուղարկվում է ԾԿԳ:

2. ԾԿԳ-ն ստուգում է հայտի համահունչ լինելը ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրին և տվյալ ոլորտում պետական ռազմավարությանը, ինչպես նաև դրա ընդհանուր համապատասխանությունը Թայեքսի բնութագրիչներին/չափանիշներին:

ա) եթե հայտը գնահատվում է չափանիշներին համապատասխան, ապա ԾԿԳ-ն այն ներկայացնում է ԵՀ-ի հաստատման, իսկ հայտի պատճենն էլ ուղարկում է ՀՀ-ում ԵՀ պատվիրակություն:

բ) եթե հայտը չի համապատասխանում Թայեքսի պահանջներին, ապա այն մերժվում է ԾԿԳ կողմից:

գ) եթե հայտը համահունչ է ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրին, սակայն առկա են ոչ ճշգրիտ տվյալներ կամ հայտի ձևաթերթիկը ճիշտ չի լրացվել, ապա ԾԿԳ-ն կարող է ՇՄ-ից խնդրել լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև կարող է հայտը վերադարձնել Շահառու մարմնին համապատասխան ճշտումներից հետո այն կրկին ԾԿԳ ներկայացնելու պայմանով: Մերժման դեպքում, ԾԿԳ-ն տեղեկացնում է ՇՄ-ին՝ տրամադրելով համապատասխան հիմնավորումներ:

3. Եթե հայտը համապատասխանում է վերը բերված չափանիշներին, ապա այն ներկայացվում է ԵՀ-ի Հարևանության քաղաքականությունում ընդգրկված երկրների գծով Թայեքսի պատասխանատու ստորաբաժանումներին՝ Ընդլայնման գլխավոր տնօրինության Կառույցների զարգացման ստորաբաժանում (ELARG/D4) և EuropeAid համագործակցության գրասենյակի A6 բաժին (AIDCO/A6)՝ որը պատասխանատու է Թվինիզ, Թայեքս և Սիզմա ծրագրերի համակարգման համար:

4. Այնուհետև հայտը 1-2 շաբաթվա ընթացքում քննարկվում է հետևյալ ստորաբաժանումների կողմից.

✓ Թայեքսի գրասենյակ - ԵՄ համընդհանուր օրենսդրության (Acquis) հետ համապատասխանության և իրագործելիության տեսանկյունից,

- ✓ AIDCO/A6 - Ազգային ինդիկատիվ/Գործողությունների ծրագրերի հետ համապատասխանության տեսանկյունից:
- 5. Թայեքսի գրասենյակը նախաձեռնում է խորհրդակցություններ նաև այլ ճյուղային գլխավոր տնօրինությունների հետ: Այդ խորհրդակցությունները տևում են առավելագույնը 5 աշխատանքային օր: Միևնույն ժամանակ, AIDCO/A6-ը հայցում է ԾԿԳ-ի և ՀՀ-ում ԵՀ պատվիրակության կարծիքը:
- 6. Թայեքսի գրասենյակը խորհրդակցությունների ավարտից հետո ընդունում է վերջնական որոշումը և տեղեկացնում ԾԿԳ-ին ու հայտատուին: Հայտի մերժման դեպքում տրվում է համապատասխան հիմնավորում: Եթե որոշումը դրական է, ապա Թայեքսի գրասենյակը Թայեքսի տվյալների բազայում մուտքագրում է կոնկրետ միջոցառումը և վերջինիս վերագրում է Թայեքսի առանձին կոդ:

Ներդիր 1. Մերժման պատճառներն են (սակայն չեն սահմանափակվում դրանցով).

- ✓ Թայեքս միջոցառումը համատեղվում է ոչ Թայեքս միջոցառումների հետ.
 - ԵՀ-ն չի աջակցում մասնակցությունն այնպիսի միջոցառումներին, որտեղ այն չունի որևէ մասնակցություն կամ որոնք կազմակերպվել են այլ մարմինների և հաստատությունների կողմից (այդ թվում նաև անդամ պետության և Շահառու մարմնի),
 - Եթե պահանջվում են մասնակցության վճարներ, որը հակառակ է Թայեքսի գաղափարին
- ✓ Կրկնօրինակումներ թվինինգ ծրագրի հետ (թե՛ բովանդակության և թե՛ ժամանակի առումով).
 - ԵՀ-ն չի աջակցում Թայեքս միջոցառմանը եթե նույն խորագրով միջոցառում իրականացվում է թվինինգ ծրագրով:
- ✓ Խիստ թույլ կապ ԵՄ համընդհանուր օրենսդրության (Acquis Communautaire) հետ
- ✓ Մասնավոր տեխնիկական աջակցություն
 - Թայեքսը չի կարող օգտագործվել մասնավոր (հիմնված անձնական շահերի վրա) նախաձեռնությունների իրականացման համար՝ Թայեքսի կողմից հովանավորված միջոցառման հետ ոչ մի առնչություն չունեցող արտասահմանում որևէ միջոցառմանը մասնակցելու համար ուղևորության և հյուրանոցի ֆինանսավորում պահանջելով:
- ✓ Թայեքս մեկ այլ հայտի կրկնություն (նույն խնդիրները, տարբեր տեսակներով):
 - Թայեքսը չի աջակցում այն հայտերին, որոնք առնչվում են Թայեքս միջոցառումների տարբեր տեսակների ներքո արդեն իսկ իրականացված խնդիրներին

- 7. Ապա Թայեքս միջոցառումը մտնում է իրականացման փուլ: ELARG/D4-ից Թիմի ղեկավարը, AIDCO/A6-ի հետ սերտ համագործակցությամբ, պատասխանատու է միջոցառման կազմակերպման համար՝ հրավերներ, օրակարգ, որում նշված է միջոցառման վայրը, փորձագետների ընտրություն, հաղորդակցություն շահառուի հետ, մինչդեռ Հանձնաժողովի կապալառում (Ծառայություններ մատուցողը՝ ներկայումս ԳԶԳ) պատասխանատու է միջոցառման բոլոր կազմակերպչական հարցերի համար: Երբ միջոցառման իրականացման բոլոր մանրամաս-

ները պարզվում են, Ծառայություններ մատուցողը ELARG/D4-ից ստանում է իր աշխատանքների իրագործման ֆորմալ մանդատը (միջոցառումից մոտ երկու շաբաթ առաջ): Ծառայություններ մատուցողն ուղղակիորեն համագործակցում է ներկայացված հայտում նշված կոնտակտային անձի հետ: Կոնտակտային անձը և Ծառայություններ մատուցողն աշխատում են համատեղ, որպեսզի գտնեն Թայեքս միջոցառման կազմակերպչական խնդիրների լավագույն լուծումները:

Երկրորդ դեպքում (Թայեքսի միջոցառման նախաձեռնությունը գալիս է ԵՀ-ից կամ ԵՄ անդամ պետությունից) սովորաբար կազմակերպվում է սեմինար մի քանի երկրների մասնակցությամբ: Ընթացակարգը բաղկացած է հետևյալ քայլերից.

1. ELARG/D4-ը ՀՀ-ում ԵՀ պատվիրակությանը կամ ԾԿԳ-ին խնդրում է ՀՀ-ից թեկնածու(ներ) առաջարկել Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմակերպվող սեմինարին մասնակցելու համար:
2. ՀՀ-ում ԵՀ պատվիրակությունը խնդրանքն ուղարկում է ԾԿԳ:
3. ԾԿԳ-ն թեկնածու առաջարկելու խնդրանքը, առկայության դեպքում նշելով Պատվիրակության առաջարկությունը, փոխանցում է Շահառու մարմիններում նշանակված պատասխանատու անձանց:
4. Շահառու մարմինը նշանակում է մասնակցին և տեղեկացնում ԾԿԳ-ին:
5. ԾԿԳ-ն թեկնածուների անունները, պաշտոնները և կոնտակտային տվյալները տրամադրում է Պատվիրակությանը և ELARG/D4-ին:

Թայեքսի Գնահատման առաքելությունները կարող են կազմակերպվել ԾԿԳ-ի միջոցով ներկայացված Շահառու մարմնի հայտի հիման վրա՝ Հանձնաժողովի համապատասխան ծառայությունների համաձայնությամբ (AIDCO A6, ELARG D4, RELEX D2, ճյուղային գլխավոր տնօրինությունները և Պատվիրակությունները): Գնահատման առաքելության հայտ ներկայացնելու համար օգտագործվում է Թայեքսի Փորձագիտական առաքելության դիմումի ձևաթերթիկը:

Թայեքս **Գնահատման առաքելության** համար անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը

1. Թայեքսի հայտերի ներկայացում

Հայտերը կարող են ներկայացվել ՇՄ-ի (Ծրագրերի կառավարման գործակալության միջոցով), Եվրոպական Հանձնաժողովի համապատասխան ծառայությունների կամ ճյուղային գլխավոր տնօրինությունների կողմից: Ամեն դեպքում AIDCO A6/ELARG D4/RELEX D2/պատվիրակությունները և ԾԿԳ-ն պետք է հավանություն տան Գնահատման առաքելության առաջարկին և ներգրավված լինեն նախապատրաստական փուլերում:

2. Նախապատրաստական հանդիպում

ELARG D4 ստորաբաժանումը կարող է (անհրաժեշտության դեպքում) Հանձնաժողովի համապատասխան ծառայություններին հրավիրել նախապատրաստական հանդիպման, որպեսզի պարզաբանեն առանձին առաջարկների կոնկրետ կիրառության ոլորտը, նպատակն ու ակնկալվող արդյունքները՝ հաստատված հայտերի վերջնական ցանկը համաձայնեցնելու համար:

3. Փորձագետների ընտրություն

Գնահատման առաքելության մեջ ընդգրկված փորձագետների թեկնածությունը կարող է առաջադրվել համաապատասխան գլխավոր տնօրինությունների կողմից՝ անհրաժեշտության դեպքում ELARG D4 ստորաբաժանման աջակցությամբ:

4. Գնահատման առաքելության շրջանակի սահմանում և հարցաշարերի կամ ստուգացանկի նախագծերի պատրաստում

Հանձնաժողովի ծառայությունները այլ շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակում են հարցաշար կամ ստուգացանկ, որը պետք է ուղարկվի ընտրված փորձագետներին՝ կարծիքի: Համաձայնեցված հարցաշարերը տրամադրվում են ՇՄ-ին՝ լրացնելու նպատակով: Ցանկալի է լրացնել հարցաշարերը խորհրդակցական հանդիպման միջոցով (հաջորդ քայլ), այսինքն դրանք կարող են նախօրոք ուսումնասիրվել ԵՀ և ԱԵ փորձագետների կողմից՝ անհրաժեշտության դեպքում ՇՄ-ից խնդրելով պարզաբանումներ:

Ի լրումն վերոնշյալի, նախատեսվող առաքելության ծրագիրը պետք է հավանության արժանանա Հանձնաժողովի և Անդամ երկրի փորձագետների կողմից՝ նշելով առաջարկվող հանդիպումների ցանկը: ԾԿԳ և ԵՄ պատվիրակությունը պատասխանատու են համապատասխան շահառուների հետ այդ ցանկի համակարգման համար: ԾԿԳ-ն պատասխանատու է նաև ծրագրի նախագծի պատրաստման համար՝ նախքան խորհրդակցական հանդիպումը:

5. Խորհրդակցական հանդիպում

ELARG D4-ը AIDCO/RELEX/տվյալ ոլորտի Գլխավոր Տնօրինությունների աշխատակիցների և ԱԵ փորձագետների հետ համատեղ կարող է կազմակերպել խորհրդակցական հանդիպում՝ առաքելության մանրամասները, ներառյալ օգտագործվելիք չափանիշները (հիմք ընդունելով պատրաստված հարցաշարը) համաձայնեցնելու և որոշ ընթացակարգային հարցեր (թիմի կազմը, առաքելության տևողությունը, ժամանակացույցը և այլն) քննարկելու նպատակով: Հանդիպումը կարող է կիրառվել նաև Շահառու երկրի ներկայացուցիչների հետ համատեղ բավարարման ենթակա հատուկ հարցերը, առաքելությունից առաջ տրամադրվելիք տեղեկատվությունը, ինչպես նաև առաքելության հետ կապված կազմակերպչական հարցերը վերլուծվելու նպատակով:

6. Ծրագրի ավարտ և լրացուցիչ տեղեկատվության վերանայում

Գնահատման առաքելության նախնական ծրագիրն ուղարկվում է ԾԿԳ և ԵՄ պատվիրակություն: Վերջիններիս կողմից դիտողություններ/առաջարկներ ստանալուց հետո ELARG D4-ը ԱԵ փորձագետի համակարգմամբ ավարտում է գնահատման առաքելության ծրագրի մշակումը:

6. **ÂºÙ°øê ØÆæàòº èàôØÛ°ðÆ ¶ÛºÐºî àôØ °î ÐºÐì °îî àôÂÛàôÛ**

Իրականացվող միջոցառումների նպատակահարմարության և արդյունավետության գնահատման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի բարձրացման համար, Շահառու մարմինները պետք է կատարեն Թայեքս միջոցառման գնահատում և այն ուղարկեն ԵՅ կամ համապատասխան պատասխանատու անձանց միջոցով ԾԿԳ: ԵՅ ուղարկվելիք Գնահատման թերթիկները տրամադրվում են Ընդլայնման գլխավոր տնօրինության կողմից, իսկ համապատասխան համակարգող անձանց միջոցով ԾԿԳ ուղարկվող Գնահատման զեկույցների օրհանկելի ձևերը ներկայացված են Հավելված 2-ում: Գնահատման այդ զեկույցները կարող են նաև օգտագործվել մասնակիցների կողմից՝ իրենց ղեկավարներին Թայեքս միջոցառման արդյունավետությունը ներկայացնելու նպատակով:

Յուրաքանչյուր տարի ԾԿԳ-ն տարեկան հաշվետվություններ է ներկայացնում Թայեքսի վերաբերյալ, ներառելով դիտողություններ և միջոցառումների արդյունավետության ու նպատակահարմարության գնահատումներ, ինչպես նաև համապատասխան շահառուների հետագա գործողությունների վերաբերյալ առաջարկություններ (օրինակ՝ հետագա թվինինգ ծրագրեր, օրենսդրության փոփոխություններն այլն):

Գնահատման արդյունքների հիման վրա, Թայեքսի գրասենյակը հրապարակում է միջոցառումների իրականացման տարեկան հաշվետվություն, իսկ Բոյուսելում գումարվում են համատեղ (Թայեքս + Թվինինգ) տարեկան հանդիպումներ՝ հաստատությունների զարգացման աջակցության գործիքների ձեռքբերումներն ուսումնասիրելու և հնարավոր բարեփոխումները քննարկելու նպատակով:

ԹՅՐ ԵՒ ԾՐԱԳՐԻ 1. ԱՇԽԱՏԱԺՈՂՎԻ ԹԱՅԵՔՍ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՄ ՕՐԵՆՆԱԿԱՐԳՈՒՄԻ ԿՐԻՏԵՐԻՆԻ ԵՎ ԿՐԻՏԵՐԻՆԻ ԱՎԳՈՒՄԻ ԿՐԻՏԵՐԻՆԻ

Ուղեցույց

Ինչպես լրացնել Թայեքս հայտածևը I. Աշխատաժողով/Սեմինար

ԹԱՅԵՔՍ-ը կամ Տեխնիկական աջակցություն և տեղեկատվության փախանակումը եվրոպական հանձնաժողովի ընդլայնման գլխավոր տնօրինության գործիք է: Թայեքսը օգնում է երկրներին՝ ազգային օրենսդրությունը ԵՄ օրենսդրության մոտարկման, կիրառման և կիրարկման հարցերում:

Թայեքս աշխատաժողովի **հիմնական նպատակն** է շահառու երկրի համապատասխան լսարանին ներկայացնել և պարզաբանել ԵՄ օրենսդրությունը և դրան առնչվող հիմնահարցերը: Թայեքս աշխատաժողովը կարելի է լավագույնս օգտագործել հետևյալ խնդիրների լուծման համար՝

- ընտրված ընդհանուր ոլորտում ԵՄ անդամ երկրի օրենսդրական և/կամ ինստիտուցիոնալ դաշտի վերաբերյալ հիմնարար տեղեկատվության ստացում
- Հայաստանի համար կիրառելի համապատասխան օրենսդրական դաշտ բացահայտելու նպատակով ավելի նեղ և հատուկ ոլորտներում ընտրված ԵՄ մի շարք անդամ երկրների օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտերի վերաբերյալ իրազեկության բարձրացում:

Թայեքս աշխատաժողովը օգտակար գործիք է Շահառու երկրներին (ՇԵ) ԵՄ անդամ երկրների օրենսդրական, նորմատիվ և ինստիտուցիոնալ շրջանակների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու համար: Նշված միջազգայնումը հնարավորություն է ընձեռում ՇԵ-ին ստանալ հիմնական տեղեկատվություն՝ օրենսդրական և/կամ ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջնայնությունները հատկորոշելու, ինչպես նաև Հայաստանի պայմաններում ընդունելու կամ ներդաշնակեցնելու համար պատշաճ օրենսդրական կամ ինստիտուցիոնալ «նոդել» ընտրելու նպատակով:

Խորհուրդ է տրվում նշել Ձեր նախապատվությունները (եթե կան այդպիսիք) այն երկրների նկատմամբ, որոնց փորձը ենթադրաբար կարող է օգտակար լինել համապատասխան ոլորտում:

Թայեքս աշխատաժողովը կարող է դրական ազդեցություն ունենալ հնարավոր Թվի-Նինգ ծրագրի հատկորոշման համար:

Խնդրվում է ուշադիր կարդալ հայտածնի ծանոթություններն ու տողերը

Ինչպես լրացնել Թայեքս աշխատաժողովի հայտադիմումը

Հայտածնի համապատասխան դաշտ	Լրացնելու խորհուրդներ և օրինակներ
Շահառու երկիր	Հայաստանի Հանրապետություն
Շահառու նախարարություն /ծառայություն	Շահառու մարմնի ամբողջական պաշտոնական անվանումը, ինչպես նաև վերադաս մարմնի պաշտոնական անվանումը պետք է հստակորեն նշված լինի ձևով Օրինակ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հավատարմագրման գործակալություն
Ներկայացման ամսաթիվ	Թայեքս հայտադիմումը պետք է ներկայացվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ծրագրերի կառավարման գործակալություն (գործակալություն)՝ համապատասխան մարմնի պատասխանատու անձի կողմից: Եթե հայտադիմումը, ինչպես ձևակերպումը, այնպես էլ բովանդակությունը, համարվի բավականաչափ հիմնավորված՝ գործակալությունն այն կուղարկի Բրյուսել՝ Թայեքսի գրասենյակ: Խորհուրդ է տրվում ներկայացնելուց առաջ հանդիպում խնդրել գործակալության հետ՝ հայտադիմումի նախնական գնահատման համար:
Աշխատաժողովի բովանդակությունը	
Աշխատաժողովի առաջարկվող անվանումը	Աշխատաժողովի անվանումը պետք է ներկայացնի պահանջվող միջոցառման կոնկրետ քեման առանց մանրամասների: Օրինակ- ԵՄ հավատարմագրման օրենսդրության ընթացակարգերը
Անցկացման առաջարկվող օրը	Առաջարկվող աշխատաժողովի անցկացման օրը պետք է լինի իրատեսական: Հաշվի առեք, որ նախապատրաստական փուլը ԾԿԳ-ի կողմից հայտն ընդունելու օրվանից մինչև միջոցառման իրականացումը պահանջում է առնվազն 10 -12 շաբաթ:
Մասնակիցների ակնկալվող թիվը	Մասնակիցների ակնկալվող թիվը պետք է լինի 20-ից 50-ի սահմաններում:

Հայտածևի համապատասխան դաշտ	Լրացնելու խորհուրդներ և օրինակներ
